ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
22.10.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/12 գնման պայմանագրի

ք. Երևան 08. 04 .2026 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գործադիր տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.03.2026թ. N 372-Ն որոշումը և ՀՀ Սյունիքի մարզի ք. Գորիսի Ա. Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 22.10.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրում ավելացնել նոր 7.14 կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

«7.14 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումն իրականացվում է համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:»:

1.1.2 Հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	փորձաքննություն» ՓԲԸ
Կառավարական տուն 3	ք.Երևան, Կոմիտաս 54բ
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 220183330939000
Հ/Հ 900011054690	ՀՎՀՀ 01508665
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Գործադիր տնօրեն՝
Վ. Հարությունյան	Գ. Արշակյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
22.10.2025թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱԾՁԲ-25/12 գնման պայմանագրի
08.04 .2026 թ. կնքված N 1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2025թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/34	ՀՀ Սյունիքի մարզի ք. Գորիսի Ա. Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի մարզադահլիճի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննություն	-	-	-	-	480 000	480 000	480 000	480 000	480 000	480 000	480 000	480 000	480 000	480 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
Աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054690
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

---------- Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«ՀՀ նախագծերի պետական արտադերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 54բ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220183330939000
ՀՎՀՀ 01508665

Գործադիր տնօրեն՝

---------- Գ. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.